

Հարցաշար հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
9-րդ դասարան

Տևողությունը 180 րոպե

Թավ անտառում՝ թխկենու կողքին, վայրի տանձենու մի շիվ էր բուսնել: Երկնուղեշ հսկան ստվերել էր նրան իր կնգուղաձև ամպհովանիով:

– Օգնի՛ր ինձ, թխկենի՛, հե՛տ տար սաղարթներդ, – աղերսում էր դալարիքան տունկը, ապա աղեմորմոք մրմնջում, – ապրելու տենչը սրտումս՝ ես քեզնից ընդամենը լույսի մի շող եմ խնդրում:

Սակայն լայնատերև վիթխարին, անտարբեր մեռնող ծառի աղերսին, անվրդով վայելում էր արևի լուսառատ ջերմությունը:

Այդ պահին՝ անտառով զբոսնելիս, տղան նկատեց դեղնամած տունկը և իսկուն հանեց հողից: Շիվը գրկած՝ վարարուն գետն անցնելը վտանգավոր էր, բայց պատանին որոշեց ամեն գնով փրկել նրան:

Տունկը, որ ժամեր առաջ հոգեվարք էր ապրում, հայտնվեց շենշող այգում, որի ջրարբի, պարարտ հողը սիրով հյուրընկալել էր բերքատու տնկիներին: Ծառն անչափ երջանիկ էր, որ գտնվեց մեկը, ով սատարեց իրեն:

Նորատունկ ծառերը տղային տեսնելուն պես օրորվում էին մեղմահնչյուն սուսափով. դրանք բոլորը փրկված շիվեր էին:

Իսկ որքա՛ն անօգնական շիվեր են մեռնում անտառում: Մեռնում են ...

1. Շարունակի՛ր անավարտ նախադասությունը: Մեկնաբանի՛ր բնագրի միտքը մեկ բարդ նախադասությամբ: (2 միավոր)
2. Գրի՛ր երկնուղեշ, կնգուղ, ամպհովանի, դալարիքան, աղեմորմոք, հոգեվարք, շենշող, ջրարբի, պարարտ, սուսափ բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
3. Տեսքտից դո՛ւրս գրիր տարատեսակ չորս դերբայ, նշի՛ր տեսակը, պաշտոնը: (2 միավոր)
4. Կազմի՛ր տրված նախադասությունների շարահյուսական հոմանիշները:
Տունկը, որ ժամեր առաջ հոգեվարք էր ապրում, հայտնվեց շենշող այգում:
Նորատունկ ծառերը տղային տեսնելուն պես օրորվում էին մեղմահնչյուն սուսափով: (2 միավոր)
5. Տեքստում ընդգծված ուղղակի խոսքը դարձրո՛ւ անուղղակի: (2 միավոր)
6. **Ծառը երագում էր** համառոտ նախադասությունը դարձրո՛ւ ընդարձակ՝ **որոշիչ** և **ուղիղ խնդիր** բնույթ ունեցող դարձվածներով: (2 միավոր)
7. Կազմի՛ր բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասության մեկական օրինակ **թե** շաղկապով: (1 միավոր)
8. Տեքստից դուրս գրի՛ր հինգ բարդածանցավոր բառ, նշի՛ր ածանցները: (1 միավոր)
9. Բացատրի՛ր **երախտագիտություն** – **երախտիք**, **հառել-հառնել** հարանունները: (1 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն **«Իմ երկրի լուսավոր այգաբացը»** վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)